ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Բոլորեց անվանի գիտնական, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, ճանաչված դասախոս ու հասարակական գործիչ Բաբկեն Հարությունի Հարությունյանի ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակը:

Բ.Հարությունյանը ծնվել է 1941թ. մարտի 4-ին՝ Երևանում, Մեծ եղեռնի ժամանակ Վանից բռնագաղթած աշխատավոր ընտանիքում: Հրաչյա Աճառյանի անվան գպրոցը 1958թ. ոսկե մեդալով ավարտելուց հետո նույն տարում ընդունվել ու 1962թ. ժամկետից շուտ գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1972-1977թթ. ուսանել է նույն բուհի իրավաբանության ֆակուլտետում, որը ևս ավարտել է գերազանցությամբ: Նա 1963-1966թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում և պատրաստել թեկնածուական ատենախոսություն՝ «Վայոց ձոր (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն)» թեմայով, որը հաջողությամբ պաշտպանել է 1968թ.: «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման՝ համակարգն ըստ «Աշխարհացույցի» խորագրով դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է 1993թ.:

Պատմաաշխարհագրական խոր գիտելիքները, աղբյուրագիտական բարձր պատրաստականությունը և հետազոտական ու վերլուծական անվիճելի կարողությունները նրան ապահովել են գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ՝ ինչպես թեմատիկ, այնպես էլ ժամանակագրական առումով: Բ.Հարությունյանի գիտական պրպտումների արդյունքներն ամփոփված են շուրջ 200 աշխատություններում (մենագրություններ, հոդվածներ, քարտեզներ), որոնք նվիրված են Հայաստանի ու հարակից երկրների, գլխավորապես հին ու միջնադարյան պատմության, ինչպես նաև պատմական աշխարհագրության բազմակնճիռ խնդիրներին: Հայագիտությանը քաջատեղյակ լինելը նրան օգնել է խուսափել ավելորդ կրկնություններից ու տրորված ուղիներից՝ մղելով յուրաքանչյուր քննվող հարցի մոտենալ նորովի և իր որոշակի լուման բերել հայագիտությանը:

Գիտական գործունեության սկզբնական շրջանում Բ.Հարությունյանը մեծ տեղ է հատկացրել Վայոց ձորի և Սյունյաց թագավորության պատմության ուսումնասիրությանը: Թագավորության համապարփակ պատմության վերհանմանը զուգընթաց, նա կատարել է պատմաաշխարհագրական, ժամանակագրական ու տեղանվանական բնույթի բազմաթիվ ճշգրտում-սրբագրումներ: Հետագայում գիտնականի հետաքրքրության շրջանակներն ընդլայնվել են: Նա զբաղվել է «Գահնամակ» և «Զորանամակ» հին հայկական վավերագրերի քննությամբ և պարզել, որ դրանցից առաջինը ստեղծվել է ոչ թե Սահակ Պարթևի, այլ՝ Խոսրով IV-ի կողմից և նպատակ է ունեցել իրավաբես ամրագրելու 388թ. վերամիավորված Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը: «Զորանամակի» ուսումնասիրությամբ մասնավորապես ճշտվել են հայոց բանակի արքունի և նախարարական հատվածների հարաբերակցությունը, մարդպանական և մաղխազական գնդերի ռազմուժը և Վիրքն ու Աղվանքը ռազմակալող զորամասերի

մարդուժը: Անդրադառնալով հայ ժողովրդի կազմավորման հարցին, Բ.Հարությունյանը զարգացրել է այն գաղափարը, որ այդ գործընթացի թթխմորն է եղել տեղաբնիկ թոգարմա ցեղախումբը: Գիտնականը մեծ տեղ է հատկացրել նաև Հայաստանի և հարակից երկրների մ.թ.ա. VII-VI դդ. պատմությանը, որի հետազոտությունը կատարվել է աղբյուրագիտական առկա ամբողջ նյութի օգտագործմամբ: Առաջավոր Ասիայի այդ շրջանի քաղաքական պատմության լայն հենքի վրա նա լուսաբանել է հայոց պատմության մի քանի հիմնախնդիրներ, անդրադառնալով նաև հայ-սկյութական, հայ-մարական ու հայ-պարսկական հարաբերություններին: Ուսումնասիրելով Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանումը, Բ.Հարությունյանը փաստական հարուստ նյութի հիմամբ ցույց է տվել, որ Հայաստանի տարածքում գտնվել է միայն XIII սատրապությունը և ոչ թե նաև XVIII-ը, որը մինչ այդ հայագիտության մեջ տիրապետող կարծիք էր: Նրա բազմաթիվ աշխատություններ նվիրված են Արշակունյաց և վաղ մարզպանական պատմաշրջանների Հայաստանի վարչաքաղաքական կացությանն ու կառուցվածքին, նախարարություններին, արքունի գործակալություններին, հայ եկեղեցու թեմական բաժանմանը: Հայագիտության մեջ արծարծվող շատ դրույթներ կամ հիմնավոր փաստարկվել են, կամ էլ լուսաբանվել ու բացատրվել արդի պատմագիտության նվաճումների լույսով:

Գիտնականը հաջողությամբ զբաղվում է նաև Հայաստանի ու հարակից երկրների պատմական աշխարհագրության քննությամբ: Այդ բնագավառում նրա տքնաջան աշխատանքի արդյունքներն ամփոփվել են բազմաթիվ աշխատություններում, այդ թվում՝ շուրջ 100 պատմական քարտեզներում, ընդգրկելով ժամանակագրական լայն շրջանակ՝ սկսած հայ ժողովրդի կազմավորումից մինչև մեր օրերը, արտացոլելով հայոց պատմության բոլոր շրջափուլերը և կարևորագույն դրվագները: Նրա ղեկավարությամբ է ստեղծվում մի այնպիսի եզակի գործ, ինչպիսին է «Հայոց պատմության ուսումնական ատլասը», որն ընդգրկումով ու բովանդակությամբ նախադեպը չունի: Ատլասի քարտեզներից 47-ը լույս են տեսել դպրոցական դասագրքում: Բ.Հարությունյանը, հաջողությամբ շարունակելով իր ուսուցիչ, ակադեմիկոս Ս.Երեմյանի գործը, իրավամբ Հայաստանի պատմական աշխարհագրության ու քարտեզագրության բնագավառի ճանաչված առաջատարն է:

Այդուհանդերձ, Բ.Հարությունյանի գիտական հետաքրքրությունների կիզակետում եղել և մնում է հայ պատմաաշխարհագրական մտքի բացառիկ հուշարձան «Աշխարհացույցը»: Դրա համապարփակ ու հիմնավոր հետազոտությունը գիտնականը կատարել է աղբյուրագիտական լայն հենքի վրա՝ պատմաքննական վերլուծության ենթարկելով հայկական, հունական, լատինական, բյուզանդական, ասորական, վրացական ու արաբական աղբյուրները: Համադիր քննությամբ նա եզրակացրել է, որ «Աշխարհացույցը» V դարի արգասիք է և որ նրա հեղինակը Մովսես Խորենացին է: Բացի այդ, ապացուցել է, որ Մեծ Հայքի՝ ըստ «աշխարհների» վարչական բաժանումը ծնունդ է առել I դարում և որ «Աշխարհացույցը» տալիս է Մեծ Հայքի վարչական բաժանումն ըստ III գ. աշխարհագրերի, իսկ մեզ հասած Մեծ Հայքի աշխարհացույցում 15 աշխարհների բաժանումն իր վրա կրում է V դ. վարչական կացության ազդեցությունը: Հընթացս Բ.Հարությունյանը հստակ պատասխանել է հայագիտության մեջ վիճելի այնպիսի հարցերի, ինչպիսիք են Տիգրանակերտի տեղադրությունը, Նփրկերտ քաղաքի հունարեն արձանագրության թվագրումը, Մեծ Հայքի թագավորության I-V դդ. վարչատարածքային բաժանումներն ու վարչաքաղաքական բաժանման համակարգը և այլն: Նա նաև պարզել է Մեծ Հայքի աշխարհների և դրանց գավառների սահմաններն ու տարածքը: Ցույց է տվել, թե ինչպես են ավատատիրական հարաբերություններն ու քաղաքական իրադարձություններն ազդել Մեծ Հայքի վարչաքաղաքական համակարգի հետագա ճակատագրի վրա և ընդգծել, որ վարչական փոփոխությունները պայ-

մանավորված էին ոչ միայն քաղաքական գործոններով, այլև ավատատիրական հարաբերությունների խորացմամբ: «Աշխարհացույցի» ուսումնասիրման բնագավառում Բ.Հարությունյանի վաստակն ունի ոչ միայն պատմագիտական, այլև հասարակական-քաղաքական անժխտելի արժեք, քանի որ թուրքական ու ադրբեջանական պատմագրությունը, խեղաթյուրելով հայոց պատմությունը, փորձում է ժխտել հայկական պետականության երբևէ գոյությունն իսկ:

Բ.Հարությունյանը պատմական ճշմարտության և հարազատ ժողովրդի ազգային շահերի նվիրյալն է: Բոլորին են հայտնի Արցախի պատմությանը և Մեծ եղեռնին նվիրված նրա հոդվածներն ու պատմական քարտեզները:

1966թ. առ այսօր Բ.Հարությունյանը հայագիտական տարբեր դասընթացներ է վարում Հանրապետության մայր բուհում և իբրև դասախոս-գիտնական, ազնիվ ու արդարամիտ ղեկավար և քաղաքացի մեծ հարգանք է վայելում ուսանողության ու գործընկերների շրջանում: Նա 1993-1994թթ. դասախոսել է Համազգայինի Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկում, իսկ գիտահանրամատչելի թեմաներով հաճախ է հանդես գալիս հանրապետական մամուլով ու հեռուստատեսությամբ, պարբերաբար դասախոսում ամենատարբեր լսարաններում, սերտ կապեր ունի Ստեփանակերտի պետական համալսարանի հետ: Նա մեծ ուշադրություն է դարձնում նաև դիտական կադրերի պատրաստմանը, ինչի վկայությունն են նրա ղեկավարությամբ պաշտպանված ու պատրաստվող թեկնածուական ատենախոսությունները: Բ.Հարությունյանն այն գիտնականներից է, որը հաջողությամբ է զուգակցում գիտամանկավարժական և վարչական ու հասարակական գործունեությունը: Նա 1993թ. առ այսօր մայր բուհի պատմության ֆակուլտետի դեկանն է, իսկ 1988-ից մինչև այժմ՝ իր իսկ հիմնած՝ Հայաստանի պատմական աշխարհագրության ու քարտեզագրության լաբորատորիայի գիտական ղեկավարը: 1970-1971թթ. եղել է համալսարանի արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկանը, 1985-1988թթ. «Երևանի համալսարան» հրատարակչության տնօրենը, իսկ 1997-2000թթ. Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչը: Նա մի շարք գիտական խորհուրդների անդամ է: Դիտական զեկուցումներով հանդես է եկել հանրապետական ու միջազգային բազմաթիվ գիտաժողովներում: Բ.Հարությունյան գիտնականի միջազգային ճանաչման վկայությունն են 1994թ. Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության, իսկ 1995թ. Ֆուլբրայթ հիմնադրամի թոշակներին արժանանալը, ինչպես նաև 1998թ. բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս ընտրվելը:

Ստեղծագործական ուժերի բուռն ծաղկման շրջանում գտնվող հոբելյարին ցանկանանք քաջառողջություն և ստեղծագործական հարատև ու բեղուն գործունեություն՝ ի փառս հայագիտության հետագա զարգացման:

Ա.Ա.ԽԱՌԱՏԵԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
Գ.Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
Ա.Ի.ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Հանդեսի խմբագրական կոլեգիան և խմբագրության աշխատակազմը շնորհավորում են Բ.Հ.Հարությունյանի 60-ամյակը և մաղթում արևշատություն ու գիտամանկավարժական արգասավոր գործունեություն: